Ջերմեռանդն աղօթիւք և սիրովն առ ած միշտ ՚ի մաղթանս կանխողի, և քի կուսածին փրկչին սբ հետոցն կուսութբ հետևողի։ Միշտ պահօք և տքնութբ և խաչակրօն անդադար սաղմոսերգութբ զխաչն փրկչական ՚ի յուս բարձողի. զանմարմնոցն բերելով ՚ի մարմնի զհանդէս։ Իմոյ եղբօրդ պատուականի խարազնազգեաց կրօնաւորի. անյագ բաղձանօք և յոյժ կարօտանօք փարեալ ընդ ոք անձամբդ՝ ողջունեմ զծերունիդ սրբազան և մաքրազան։ Եւ հարցանեմ զտերամբ զօրացեալ անձինդ կեցութի։ Թէ ո՞րպիսի արդեօք կեայ ՚ի հանապազորդեան ընդ թշնամոյն մենամարտութեդ։ Որում զօրավիգն եղէլ քաջալերող տրն մեր (որ ասաց իւրոյն



ոք

որ հետեւողաց , թէ ահա՛ ետու ձեզ
իշխանութի՛ւն կոխել զօձս եւ զկարիճս , եւ
զամենայն զօրութիւն թշնամւոյն ։ Ու թէ քաջա-
լերացարո՛ւք · զի ես յաղթեցի աշխար-
հի ։) Տացէ՛ ժուժկալութի՛ւն ճշմարիտ հե-
տեւողիդ իւրոյ , փառեալ զինուքն ա-
ւետարանին ընդդէմ ամենայն չարեաց սատանայի ։
Ու անխափան ընթանալ զընթացսդ որ
առ ած · եւ հասանիլ 'ի նպատակն ուր է
դեալ առաջադրութեանդ ։ Մ`աղթանօք
նախընթացիցն միանձանց այդր լուսա-
ւոր ճանապարհի՝ մեծին եղիայի եւ յօ-
հաննու մկրտչի , եւ մերոցն նախավարժ-
չաց անտօնի եւ կրօնիդեայ ամէն ։
Ու թէ քոյին որք սիրազնեայ ազնը-
ուիդ հարցանել կամիցի զանարժա-
նիս որպիսութի , գոհութի եւ փառք այ
միշտ բարերարին · որոյ ողորմութեան եւ
հայրապատին եղբօրդ իմոյ սուրբ աղօ-
թիւքն՝ պահեալ կամք մինչեւ ցայսօր
առողջ անձամբ ըստ մարմնոյ , թէպէտ
հիւանդ ըստ հոգւոյ ։ Որ եւ քոյին աղօ-
թիւքդ եւ քոյին նմանեացդ , յուսամք
եւ հոգւով առողջանալ ներող տեառն
ողորմութեամբն ։
Ու յետ սիրոյ ողջունիս յայտ լիցի քոյին
մե

մեծի եղբայրութեանդ՝ ով անձկալի հատորդ հոգւոյ իմոյ, զի (այս ինչ և այս ինչ։)

Եւ ողջ լեր գնալով միշտ ՚ի զօրութէ ՚ի զօրութի. և երևեսցի ած հրեշտակաց ՚ի սիօնի քում սրտի ամէն։

(Մնալիսան ծառայ քո յարութի իբր աբեղայ։)

---

Սարապետ։

Աահին լուսոյ վերին առագաստին և երանելեացն գաւառին անսայթաք հետևող ամենաբարեպաշտուհի մայր իմ պանծալի և քոյր իմ անձկալի։ Պատուեալ կուսութե և համեստութե. կուսածին տն մերոյ յի և մօր նորին միշտ կուսի ոք ընթացիցն ընթացակից։ Որ համեստ վարուք և պարկեշտ բարուք գեղեցկացուցեալ զմաքրազարդ քոյին կուսութիդ իբր զծաղիկ վայելուչ և քաղցրաբուրեան, զամենեցուն զծանօթից զհոգևոր զաչս և զքիմս բերկրեցուցեալ, գովիչս և քարոզիչս քեզ ըստանեաս։ Արդ՝ այդպիսոյդ ազնուէի ակամդ պատուականի և կուսամաքուրն մարգարտի ներ խորուե կենցաղոյս ծովու գտեցելոյ, ամենանուաստ և յետ-



նեալս

նէըս ամէնեցունց՝ անարժան շըթամբքս ողջոյն հոգևոր ըղձանաց և բաղձանաց ընծայելով, զխաչակիր անձինդ որպիսութիւն հարցանելով հարցանեմ, թէ որպիսի արդեօք կեայ քոյին քնակիր անձինդ ներկայումս։ Օ՜ որ կուսածին փրկիչն աշխարհի ծնողին խորոյ միշտ կուսի ամենայցելուհւոյ բարեխօսութեամբն՝ պահելով զմայրդ իմ միշտ այդպիսի համեստութեամբ և ճգնակրօն ժուժկալութեամբ, աղօթօղս շնորհեսցէ մեզ զքոյին սրբութիւնդ ամէն։

Իսկ եթէ քոյրդ իմ անձկալի հարցանիցէ զմեղաւորիս որպիսութի, ահա գոհութիւն տն այ բիւրիցս բիւր և անհամար բիւր։ Որ երջանիկ մօրդ իմոյ արժանընդունակ աղօթիւքն պահեալ է զմեր անարժանութիւս ողջ առողջ մինչև ցայսօր խորով անհուն ողորմութեամբն և քաղցր և մարդասէր բարերարութեամբն. Որոյ տրիտուր ոչ ինչ ունիմք տալ, բաց ՚ի գոհութէ. և յայս ևս իւր տալոցն մեզ բերան և լեզու։

Եւ արդ ով մայր իմ և քոյր՝ անձկալի հոգւոյ իմոյ, յետ սիրոյ ողջունիս քոյին սրբութեանդ, ծանիցէ մաքրու ՚ի քո զի (այս ինչ և այս ինչ։)

Այլ ողջ լեր ով քոյր իմ սրբասէր 'ի
շնորհս տն մերոյ յի քի միշտ հոգևոր
զարգացմամբ 'ի տր ամէն ։
(Անպիտան ծռյ իբր մահտեսի յարութե։)

## Հօր 'ի որդւոյ ։

Սկիզբն կենաց իմոց և պատճառ գոյութեան յետ այ ։ Խրատով և խնամով զիս պահօղ և մեծուցօղ ։ Իմ աչացս լոյս սիրելի և պատուելի հօրս բազում սիրով և յոյժ կարօտիւ զերկու ձեռքունքն կու համբուրեմ անարժան բերանովս ։ Այլ կու հարցանեմ զքո ողջութիւնդ թէ ո՞րպէս կեաս 'ի յայս դառն աշխարհիս և 'ի դժուար ժամանակիս ։ Ած զքեզ անփորձ և անսասան պահեսցէ ով իմ պատուական հայրիկ, և զքո շուքդ իմ վրայէս չպակսեցնէ ․ որ ես զոր ողջ եմ, զքո պակսիլդ չտեսնեմ ․ և քեզմով մխիթարիմ ։ Այլ թէ դու զիմ ահվալս կու հարցանես իմ պատուական հայրիկ, ահա գոհութի այ ․ որ քու աղօթքովդ ողջ և առողջ եմ մինչև ցայսօր՝ այ անհուն ողորմութենովն ․ և քու տեսուն խիստ եվելով կարօտեմ ։ Ած քու աղօթքովդ

քովդ զիս արժանի անէ, որ անգամ
մի այլ զքո երեսդ տեսանեմ և ապա
մեռնիմ։

Դու գիտացիր իմ անուշիկ Հայրիկ, որ քու գիրդ եկաւ հասաւ ինձի. որ ըսեր էիր թէ, ա՛յ որդի՛ ինչի զմեզ մոռացար։ Ո՛վ լեցի իմ երախտաւոր Հայրիկ, ատ ինչպէս խօսք է որ կսես. ես զքեզ ինչպէս կարեմ մոռանալ, որ գիշեր ցորեկ մըտքես չես ելթար։ Ա՛_քին մալիմ է հրամանուցդ որ բանի մը եմք, հաշունէթէ խզմէթքեար եմք. Ի ժիր ձեռքերնիս չի պարապիր որ գիր գրենք։ Թէ չէ, ա՛ծ գիտէ որ իսկի մոռացս չես հեռանար։ Ես որ զքեզ մոռանամ որ իմ աչացս լոյսն ես, այլ զո՛վ պիտի չմոռանամ. քան զքեզ էվէլ ինձի պիտանի այլ զո՛վ ունիմ՝ իմ պատուելի ծնօղ։ Դու ահա մեր եղբայր յարութիւնին հետ՝ ութ զէրմահպուպ ոսկի ղրկեցի հրամանուցդ՝ որ զիս օրհնօղ լինիս։ Դու քանի կենդանի եմ՝ պարտական եմ հայրական խնամոցդ յամենայն կողմանէ որ չի վճարվիր։ Հէմէն ա՛ծ զքեզ միշտ կենդանի պահէ. որ քու աչքդ մեր վրայէն չպակսէ ամէն։


Դուր

## Պուրջեան Հօր :

Վերակացու և հոգածու՝ պայծառ ճրագ տանս մերոյ :

Նայօղ և խնամօղ և կառավարօղ որդւոց և Թոռանց : Յոյժ աշխատաւոր և երախտաւոր իմ աչացս լոյս պատուական հօրս : Ի նուաստ և անարժան ծառայէս երանոսէ՝ հասցէ շատ բարև շատ սիրով և շատ կարօտով զերկու ձեռքդ բազում անգամ համբուրելով : Եւ հարցանեմ զիմ հօր զանուշ խաթրիկդ թէ ինչպէս կաս ՚ի յայս դժվար ժամանակիս :

Որ յիմ մեղացս շատութէն՝ ուր որ լինի մարդ յայս ժամանակիս , նեղութին պակաս չէ : Միայն թէ ա͞ծ քու հրամանուցդ երկար կեանք և օմր տայ , որ քու որդոցդ և դստերացդ և թոռներացդ վրայէն քու շուքդ պակաս չիլինա : Ինչպէս որ ըսեր է գիրքը թէ , ծեր մի ՚ի տանէ քումմէ մի՛ պակասեսցի :

Քու մէկ աւուր կենդանութիւնդ՝ մեզի մեծ պարգևք է յոյ : Եւ թէ քո անարժան որդուտ որպէսութիւնն կու հարցընես իմ հայրիկ , ա͞յ անհատ գոհութիւն . որ իւր անհուն ողորմութենո͞ւն



պա։

պաշտէր զմեզ մինչև այսօր · որ ողջ և առողջ եմ մարմնով, և միայն քու տեսուտ խիստ կարօտ եմ։ Տր ած՝ իւր մէջ բարեխօսութեան արժանի ընէ, որ քո տեսուտ անգամ մի ալ արժանի լինիմ ամէն ։

Ու գիտացիր իմ պատուական հայրիկ, որ գիրըտ եկաւ հասաւ մեզի և գըրէր էիր թէ (այս ինչ և այս ինչ ։)

Ու ողջ կեցիր իմ աչացս լոյս հայր · որ դու հէմ մեծ հայր ես քու թոռանցդ՝ հէմ մեծ մայր · օրերըտ շատ լինի, որ մեզի շատ պիտանանաս · ամէն ։

Իմ աչացս լոյս կարապետիս շատ բարև կանեմ · և իմ աչացս լոյս մարիամին շատ բարև կանեմ · երկու աչքերնին կու համբուրեմ շատ հասրէթով։ Ու իւրեանց մօրն շատ բարև · տըղոցն լաւ մուղայէթ լինիս · ած ողորմած է ումուտնիս չինք կըտրեր ։ Հէմէն հանապազ մեր ած աղաչէ, որ զմեզ երկրի էխտաճ չընէ · որ մեր ղայրէթնալ այս է · ու ջոսըդ ջիդ մի կըտրեր ։ Ու դըրացներուս ամենուն շատ բարև կանեմ · և զամենուն խաթըրիկն կու հարցանեմ ողջ կեցիք ամէն ։

# Մօր է յարգելոյ։

Տանն մերոյ միշտ շէն պահօղ. և զորդիքըդ և ըզթոռներըդ շահօղ։ Համեստիկ և անուշիկ բազմաշխատ և բազմերախտ աչացս լոյս մօրս՝ շատ սիրով և շատ կարօտով բարև կանեմ ու շատ բարև։ Եւ իմ անարժան բերանովս՝ զաշխատաւոր ձեռքունքըդ կու համբուրեմ բազում անգամ։ Եւ հարցանեմ զքեզ շատ ու շատ կարօտով. թէ ինչպէս է քո հալիկը։ Ած զքու անուշ խաթուն մայրութիւնըդ՝ քու որդոցըդ և թոռանցըդ վրայէն անպակաս ընէ։ Եւ թէ զիս կու հարցընես իմ խաթուն մայրիկ. գոհութիւն բարերարին Այ։ Որ քու աղօթքովըդ պահերէ զիս հինչուկ հիմիկ իւր անհուն ողորմութեննովն. Եւ ահա ողջ և առողջ եմ. և քու անուշ տեսուտ կարօտ եմ։ Ողօթք ըրէ իմ սիրական մայրիկ. որ անգամ մի այլ մարմնաւոր աչքով զերեսըդ տեսնալու արժանի լինիմ։ Եւ գիտացիր իմ մայրիկ՝ որ Ած ողորմած է, ամէն դռներն որ բացվի՝ ու բանինք նէ, այլի ետևանց խարձլըխը պակաս



չեմ

չէմ լինէր տվ թէ ողջ մնամ քու աղօթ_
քովըտ ։ Որ հիմիկս թեզ ելոէն հինգ_
ոսկի ղրկեցի քեզի՝ զայս թուղթս բե_
րող մեր աւետիս եղբօր ձեռօքն • առ_
նես ու մեզ օրհնող լինիս ։ Ու քո որ_
դոցտ և թոռանցտ վրայէն աչքըտ նա_
յարըտ պակաս չանես ինչպէս որ տայմա
նայօղ ու պէտ ըլօղ էս ։ Ա՟Ծ. քեզի վար_
ձահատոյց լինի որ հոգւոյտ մեծարիս
յիս ՚յետի օրտ ՚ի բարին լինի ամէն ։
Տանըս մեծին և պզտիկին և հարսիտ
և զմեզ հարցընող բարեկամներուն ամե_
նուն շատ բարև կանեմ ու խադըրերնին
կու հարցանեմ • ամէնքըտ ողջ ու բարով_
կենաք ամէն ։

## Պատճէն Մօր ։

Յաւօք ծնանող և աշխատանօք սըն_
ցընող • կաթնով կերակրող և գըր_
կով շուրջ ածող • Հոգւով և մարմնով
խնամող իմ սիրելի աչաց լոյս մօրս ըզ_
ձեռքըն և զոտքըն համբուրելով բազում
ու շատ բարև ։ Իմ ազնիւ սիրական մայ_
րիկ՝ թէ զիս կու հարցանես • բարերա_
րին և միշտ զմեզ պահողին անչափ գո_
հութի ։ Որ քու ՚նը աղօթքովըտ՝ և խեր



ան

անհուն ողորմութենովդ պահերէ ըզ_
մեզ հրեշտակի հիմիկ · որ իսկի պակա_
սութի մի չեմ տեսեր ։ Իմ անուշիկ մայ_
րիկ · չիլլինի թէ ինծի համար հոգ քա_
շես ։ Ած իմ մահուանէս աղաներուս կեն_
դանութիւն տայ , և չէլէպիներուն ա_
րևշատութի ։ Քանի որ նորա շուքըն իմ
վրայ է , ինծի իսկի պակասութի մի չըկայ
ամէն ։ Ու մի՛ գիտնար թէ ես զքեզ կու_
մոռանամ · քու լեցի իմ աչաց լոյս մայ_
րիկ · որ իմ վրայ այսչափ աշխատանք
ունիս · մայր ըսելուն ետև այլ ինչ կու_
մնայ ։ Աստուծով քանի որ ողջ մնամ,
ես զքո մայրութե երախտիքն չեմ մոռա_
նար ։ Հեմէն կու խնդրեմ քեզմէն , որ
գիշեր ցորեկ աղօթող լինիս ինծի հա_
մար · ու ընաւ իսկի հոգ չիքաշես · զե_
րէ տէղըս խիստ բարովէ · և իմ աղա_
ներուս աղօթող լինիս ։ Ու գիտացիր
իմ սիրական ծնող · որ դէմ դէմ զգիրս
որ կուշարցընեմ , չէ թէ մտացս ելեր
ես · այլ մալիմ է որ իսկի մտացս չես
հեռանար ։ Անձակս թողութի ըրէ իմ
քաղցրիկ մայրիկ · գիտես որ խըզմէթի
տէր եմք ։ Աղաներուս Ած կենդանութի
տայ , այնոր որ զկամքերնին կատարեմք ։

 Հայրիմ

Չայիմա այս բանիս մուղայէթ ենք, թէ խզմէթնուս վրայ ժիր կենանք ու հաղըր գտվինք ։ Այս սէպէպով 'ի ժիր ձեռքերնիս չի պա՛րպիր որ գիր գրենք ։ Ած զքեզ մայրութէ անհատ պահէ. ու աղօթքըտ վրայէս անպակաս ընէ ամէն ։

## Հօր և Մօր ։

Փոխանակ մեզ որդոցս ձեր՝ միշտ աշխատօղ. և տանս մեր զճրագն 'ի վառ պահօղ ։ Գլխոյս պարապար հոգւոյս հաւասար. սիրելի գովելի և մեծարելի, իմ աշխատաւոր և շատ երախտաւոր աչացս լոյս հօրս և մօրս բաղում սիրով և կարօտով շատ ու շատ բարև ։ Անարժան բերանովս և շատ հարգէթով զձեռվընիդ և զոտվընիդ կու համբուրեմ, և'ի համբուրելոյ չեմ դադարիր ։ Որ թէ քանի կենդանի եմ, զձեզ շալկովս թէ ժուռ ածեմ, ձեր ծնողութե երախտիքն չի վճարվիր ։ Որ իմ վրայ այսչափ աշխատանք քաշելնուդ եան, հիմիկս հարսնուդ և թոռնէրուդ ալ հայր ու մայր էք եղեր ։ Ինձի համար ած ձեզի շատ օրեր տայ, որ ձեր շուքըդ ձեր տանը վրայէն չի պակսի. Ու թէ զիս կու

կու հարցանէք իմ ողորմած ծնօղք ։
Ահա ձեր աղօթքովն ողջ և առողջ եմ
և ձեր տեսուն խիստ կարօտ եմ ։ Ա՟ծ
ինքն ողորմի որ անգամ մի այլ ձեր ա-
ղօթքովըն ձեր տեսուն արժանի լինամ ։
Իսկ ձեր հարսին տանըս մարդուն շատ
բարև կանեմ․ ա՟ծ իրեն կարողութի տայ․
որ տղոցն մուղայեթ կենայ․ ինչպէս
որ հինչուկ հիմիկ մուղայեթ կեցած է ։
Թէ ա՟ծ ողջ պահէ ու յաջողէ որ
գամ, ա՟վ զձեր ամէն պակասութին կու
հոգամ ։ Օէրէ ես որ զայս ղարիպու-
թինս կու քաշեմ, մէկ առի նամուսի
համարէ․ գիշեր ցորեկ կաշխատիմ, թէ
ինչ է՝ նամէրդի մուխթաճ չիլլինինք ։
Ա՟ծ ինքն ողորմի և ինքն յաջողէ ամէն ։
Սարգիսիս երկու աչքըն կու պագնեմ
լալով և բաղում կարօտով․ նոյնպէս և
լուսիկիս և նունուֆարիս ։ Ձեր նէնէին
և մեծ նէնէին և մեծ պապին խնդրանք-
կեցէք․ որ լսեմ ձեր աղէկ կենալնիտ,
և շուտով երնեմ գամ ։ Իսկ ամէնքըդ
ողջ կենաք ամէն ։

### Պատճէն Հօր և Մօր ։

Բրանաշխատ իմ սիրական հօրս և
քնքուշ սիրտ իմ անուշիկ մօրս ։

Տանս մեր ամուր պարիսպ հօրս . և որ_
դւոց և թոռանց պէտ ընօղ մօրս ։ Եւ_
այսպիսի իմ ազնիւ պատուական և սի_
րական աչացս լոյս ծնողացս բարև շատ
բարև ։ Հարցանեմ զձեզ 'ի բարին և 'ի
կամս ա՟յ , թէ որպէս էն կեանք ձեր
յայսմիկ դժար ժամանակիս ։ Ա՟ծ
ձեզ երկայն օրեր տայ . որ շատ ապրիք
ու ձեր որդոցն և թոռանցն խնամածու
լինիք ։ Եւ այս փիլիպպոսս ձեր անար_
ժան որդոյն զո՟պ լինիլն թէ հարցանէք ,
գոհութի՟ և փառք ա՟յ . որ ձեր ո՟ք ա_
ղօթքովն և հանապազ օրհնէքովն պահեր
է զմեզ մինչև այսօր՝ իւր անհուն և
անհատ ողորմութենովն ։ Ո՛վ իմ ողոր_
մասիրտ հայրիկ և մայրիկ . քանի որ 'ի
ձեզմէ զատուեր եմ . իսկի մտքես չէք
հեռանար . կարօտս օր աւուր կու ա_
ւելնայ ։ Ու տըղոցըսերը՝ իսկի մի՛ հար_
ցընէք ։ Կաղաչեմ զձեզ որ զիս յաղօ_
թից չի մոռանայք . որ օրով մի յառաջ
ա՟ծ յաջողէ որ գանք զմեր կարօտն առ_
նունք ։ Օէրէ ղարիպութիւնն քաշե_
լու հալ չէ . անճախ թէ քաշօղն գիտէ ։
Հէմէն ա՟ծ ամենուն ողորմի . ապա թէ
մեզ իւր մեղաւոր անարժան ծառային ։

Եւ դուք ողջ լերուք իմ պատուական
ծնողք երկար կենօք և խաղաղ ժամա-
նակօք ամէն ։ Այս Թղթիս բերող
մեր եղբայր խաչերին հետ՝ ութ զեր-
մահպուպ ոսկի ղրկեցի . առնուք և մեզ
աղօթող լինիք . և զհասնիլն Թղթիս՝ ի-
մացընէք ձեր ծառայիս . և յոյժ ամա-
նաթ լինիք ամէն ։

## Հարազատ Եղբօր առ Մարտինոյ ։

Անարժան և անպիտան . յոյժ նը-
ւաստ և յետնեալ ծառայէս ձոյ
մարտիրոսէս հասցէ շատ բարև և ող-
ջոյն սիրոյ՝ իմ համահայր և համամայր
հարազատ սիրական կարապետ եղբօրս ։
Հարցանեմ զքեզ ՚ի բարին և ՚ի կամս
ձոյ . թէ որպէս կեաս ՚ի կենցաղոյս դըժ-
վար ժամանակիս ։ Տէրն տերանց զքո
հարազատ եղբայրութիւդ որ հէմ եղբայր
ես իմ հէմ ճշմարիտ բարեկամ, ՚ի վե-
րուստ և ՚ի ներքուստ եկեալ պատահա-
րացն՝ անփորձ և անվնաս պահելով, եր-
կար կենօք և բարի վարուք ՚ի խոր ծե-
րութի հասուսցէ՝ մեր ծերունի ծնողացս
աղօթքովն ամէն ։

Եւ թէ ՚ի հարազատ եղբայրական սի-



րոյդ

րոյդ շարժեալ՝ զքո անարժան եղբօրդ-
զորպիսութիւն հարցանես, գոհութիւն և
փառք բարերար մարդասիրին, որ իւր
անհուն ողորմութեամբ մինչև ցայսօր պա-
հեալ և պահպանեալ է զմեր անարժա-
նութիւս առողջ և ամբողջ մարմնով և բա-
ւական պիտականօք ։ Որ և յուսամք թէ
պահելոց է գանձեալ իւր գթութեամբ՝ թէ
ունիցիմք այլ ևս ժամանակ ըստ կամացն իւ-
րոց հաճոյից ։ Որոյ գթութին և ողորմու-
թին հասցէ միշտ ա̄մծոյից իւրոց ամէն ։
Եւ յետ սիրոյ ողջունիս՝ յայտ ե-
ղեցի քեզ իմ համածնող եղբայր • որ
քո սիրոյ եղբայրութ գիրըդ եկաւ հա-
սաւ քո ծառայիս ։ Զոր կարդացի և
իմացայ զոր ինչ գրեալն էիր թէ որքան
նեղութի կրեր ես 'ի ճանապարհին • թէ
յարտաքին աւազակց թէ 'ի ներքին սուտ
բարեկամաց ։ Այլ մի՛ այնքան տրտմիր
իմ աչաց լոյս • մարդոյս կեանքն միշտ
փորձութի է լսեր են գիտունքն ։ Յոյս
ունիմք որ ա̄մծ ապաշխարանք կու համարէ
թէ կամաւ ընդունիմք զփորձութին, որ
ակամայ գայ 'ի վերայ մեր ։ Եւ կաղա-
չեմ զքեզ որ դարձեալ գիրիկըդ պակաս
չանես քո ծառայիս ։ Որ թէ 'ի քաղցր



քո

քո տեսոյդ զրկեալ եմ, պա՛րի գրկովդ մխիթարիմ։ Եւ ողջ լեր իմ պատուական եղբայր երկար ժամանակօք ամէն։

## Հարազատ Բարեկամի։

Բարեկամ հարազատ և եղբայր սի-րելի։ Արտակից և հոգեկից. մտաց ըղձալի՝ աչաց բաղձալի եղբօրդ իմոյ հոգևորի հոգւոյս հատորի. բա-զում սիրով և կարի յոյժ կարօտով ող-ջոյն ընծայեմ սարգիս ծառայս քո ՚ի հեռուստ աստի իբր ՚ի յոյժ մօտոյ։ Զի թէպէտ երկար միջոցաւ տեղւոյ հեռի եմք մարմնով յիրերաց։ Սակայն այնպէս հաստատուն պատկերացեալ է ո՟ղ սէր քո ՚ի մէջ սրտիս, որ համարիմ թէ իսկի բնաւ չես հեռացեր ՚ի քո ծառայէս։ Հարցանեմ զքեզ ուրեմն ո՛վ սիրելի եղբայր իմ. թէ ո՟պ կեայ քո պատուականն անձինդ կեցուի ՚ի յայսմիկ վշտաշատ ժամանակիս։ Զոր տ՟ր ա՟ծ պահպանիչն ա՟մի՝ պահեսցէ և պահպա-նեսցէ զքեզ յա՟մ վ՟նասակար պատահ-մանց ո՟պ զվարդ պայծառ և անթառամ. Եւ այնպէս անսասան կենօք և բարե-պաշտ վարուք՝ մինչև ՚ի խորին ծերու-թիւն հասուսցէ ամէն։

Ու թէ զմեր նուաստուե՟ս հարցանես զորպիսուե՟ն, գոհութի՟ քի՟ փրկողի՟ն մերոյ • որ իւր անհուն բարերարուե՟ն պահեալ և պահպանեալ է զմեզ մինչև ցայժմ 'ի ներքոյ անհուն նախախնամութեան իւրոյ ։ Որ ոչ ըստ մեղաց մերոց առնէ, և ոչ ըստ անօրէնութե՟ մերում հատուցանէ ։ Նաև իւր քաղցր գթութեամբն և ողորմուե՟ն՝ զարեգակն իւր ծագէ՛ 'ի վ՟ չարաց և բարեաց և այլն ։ Որոյ խնամքն և բարերարութի՟ն 'ի սիրելւոյդ իմմէ անպակաս եղիցի ամէն ։
Ու յետ սիրալիր ողջունիս ծանիր եղբայր իմ սիրելի, զի այս վեց օր է որ լուեցի թէ սակաւ ինչ հիւանդութի՟ ունեցեր ես ։ Ու յայն օրէն 'ի վեր իբրև զձուկն 'ի տապակի կու տառապիմ. և մէկ մի չի գտի որ գիր մի տամ. և ձորով գտայ զայս եղբայրս և տվի զգիրս ։ Ու կաղաչեմ զքեզ ով հատոր հոգւոյ իմոյ • որ գիրըս քեզ հասածին պէս, էհմալ չանես՝ շուտով գիր մի ղրկես ։ Որ տ՟ծն տ՟մի՝ կատարեալ առողջութե՟դ խապարովն խնդացուցէ զիս և զամենայն սիրելիսդ քո ամէն ։

## 'Ի Հօրէն՝ Որդւոյն բարև:

Գաւազան ծերութե՟ իմոյ և օգնա-
կան տկարութե՟ս: Խնդութիւն
սրտիս յարաժամ, և բերկրութի՟ հոգ-
ւոյս յամերամ: Գովելի բաղձալի եր-
կու աչացս լոյս յօհաննէս սիրելի որդ-
ւոյս շատ սիրով և շատ կարօտով բարև
շատ բարև 'ի լալագին հօրէդ անարժան
երանոսէս: Հարցանեմ զքեզ իմ սիրա-
տոչոր սրտիս կարօտեալ որդի. թէ ո՞րպ
կաս 'ի յերկիրդ այդ ղարիպութե՟: Մի՞է-
պէտ ես չէմ ղարիպ որ յիմ երկրիս կամ
և բնակիմ. բայց որ 'ի քո անուշ տե-
սոյդ հեռի եմ, այս ղարիպութի՟ս մեծ
է քան զմնալն յօտար երկիր: Որ թէ
յօտար երկիր քեզ հետ լինէի, այն
ոչ էր ինձ ղարիպութի՟: Ա՟ծ իւր առատ
ողորմութենովն՝ արժանի անէ որ տես-
նում զքեզ ու լցնի իմ կարօտութի՟ս: Օ է-
րէ հօր և մօր կարօտութի՟ն որդւոյն
վերայ՝ անպատմելի է՝ քաշօղն գիտէ:
Լ յինտի ղայրէթ ըրէ իմ աչաց լոյս որ-
դի յօհաննէս. որ օրով մի շուտով
գաս որ կարօտովտ 'ի գերեզման չի մըտ-
նամ: Ա՟ծ քեզի երկար ժամանակ ու-

առողջ անձնիկ տայ . և զամէն գործըդ քո միշտ 'ի բարին յաջողեսցէ ամէն :

## 'Ի Մօրէն՝ Որդւոյն Բարև :

Պայար բարոնեակ՝ ոսկի ըմպանակ : Մեղրածոր փեթակ՝ հոգւոյս իմ կամակ : Բաղցրիկ օշարակ՝ իմ ճար ու ճարակ : Իմ մէկիկ զաւակ՝ իմ բարձր աշտարակ : Իմ երկու աչաց լոյս սիրականս Ալէքսան որդւոյս շատ ու շատ բարև 'ի քո լալագին մօրէդ : Շատ սիրով ու շատ կարօտով՝ հարցնեմ զքեզ իմ աչքերուս լոյս Ալէքսան որդի . թէ ինչ հալի վրայ ես 'ի յօտար երկրիդ ու ղարիպ տնանկիդ : Եղուկ իմ այս ծերուն պահուս որ քեզնէ կարօտ մնացի : Գրկովս շուրջ եմ ածեր ու կաթնովս եմ սնուցեր . ու հիմիկ տեսուտ կարօտ եմ նստեր : Աչօրս է ինձ օր , ոչ գիշերս է գիշեր : Չեմ գիտնար կուշտ ես թէ քաղցած : Յարևուն պահեցի զքեզ , ու ցրտուն ծածկեցի . ու հիմիկ չիյտեմ յոր պուճախնի կու կենաս ու ինչ հալի վրայ ես : Դուն ղարիպ 'ի քո աշխարհէդ ու տընէդ . ես ղարիպ 'ի քո երեսէդ ու քաղցր լեզուէդ :



Ա.յն

Այն ա̅ծն որ ամենուն կողորմի, ինքն իր ողորմութենովն մեզալ ողորմի · որ դու գաս քու հասրաթին հասնիս · ու մեր աչքն ՚ի լոյս լինի և սրտիս խոցն դուրանայ ։ Ու թէ դու զմեզ կու հարցընես իմ աննըման՝ որդի · ա̅յ դոհունի · ամենքս ողջ և առողջ ենք · և քու քաղցրիկ երեսիտ հասրաթ ու կարօտ ենք ։ Ղեց ոսկի եկաւ մեզ հասաւ · ա̅ծ քու բանիդ գործիդ յաջողութի̅ տայ ։ Գրելկըտ պակաս չընես որ առնենք մեր աչքին քըսենք ։ Ու ողջ կեցիր իմ անուշիկ որդի ալէքսան ամէն ։ Պետրոս ամուճատ և հարսներըն տըղոցմովն շատ բարև կընեն ։ Ու դըրացներըտ և այլ բարեկամներըտ շատ բարև կանեն ։ Ու ամէնքն գլխադրիկըտ կու հարցընեն բազում կարօտով ։

## ՚Ի հօրէն և ՚ի մօրէն՝ Արտ֊ոյն ։

Նուանդնոտ սիրով ու շատ կարօտով · լալագին դիմօք ու լալօտ աչօք · անարժան հօրէտ պետրոսէն · ու խղճուկ մօրէտ դըժխոյէն ։ Հասցէ բարև ու շատ բարև մեր նորահաս վարդենի՝ ու ծաղկազարդ նունենի անուշիկ



և

և քաղցր որդի վարդերեսիդ ։ Հարցա_
նեմք զքեզ 'ի բարին և 'ի կամս արարչին․
Թէ ինչ հալով կու կենաս 'ի ղարիպ օ_
տար երկրիդ որ դու մէնէ կարօտ՝ ու_
մէք 'ի քենէ ։ Ողորմածն ած՝ քեզի
ողջ անձնիկ տայ , ու մեզ համբերութի ։
Ու իւր առատ ողորմութենովն արժա_
նի անէ զմեզ , որ մէկ ըզմէկ տեսնե_
լու արժանի լինանք ու ուրախանանք ։
Ու Թէ ըզմեզ կու հարցընես ձվ սիրա_
կան հօր և մօր կարօտած որդի , գո_
հութի ու փառք այ , որ ամէնքս ողջ
ու բարով ենք ․ մինակ քու տեսուտ կա_
րօտ ենք ․ ած քեզի հանապազ Թև ու
Թիկունք լինի ամէն ։

Ու գիտացիր մեր սիրական աչաց լոյս
որդի ․ որ (այս ինչ և այս ինչ ։)

Ու ողջ կենաս այ անհատ ողորմութե_
նովն ․ որ այ քաղցր գԹած նաւարն
քու վրայէն անպակաս լինի ամէն ։

Ողջոս քեռիտ և քեռեկինըտ ․ և որ_
դիքն ալեքսանն և ղուկասն ․ և ամու_
ձաներըտ փիլիկն և տօնիկն ․ և այլ ըզ
քեզ հարցընօղ ընտանիքըն և դրացնե_
րըտ և այլ բարեկամներըտ շատ բարև
կանեն և պանայշ խադըրիկըտ կու հարցընեն
բազում կարօտով ։

# Տէրտոյ-Պողէ :

Օ արմանալի ոլորակօք իմաստուն ժամանաց՝ քաղցրաձայն երգնակ . 'ի մէջ եկեղեցւոյ քաջահնչօղ հոգերգու՝ խորախտակ խօսնակ : Հնուտ ամ խաղից և պարուկաց , հուհայից և բենկորձաց և համեղ եղանակաց , տաղից և մեղեդեաց . գանձուց և շարականաց և այլ հոգևոր երգոց : Նու ընթերցօղ անվրթար զոբ գիրս յեկեղեցւոջ՝ պայծառ տիրացու եղբօրդ իմ սիրելւոյ : Սիրատենչ կարօտիւ յոգնաւատ ըղձիւ , բազում և յոյժ փափագանօք ընծայեմ ողջոյն սիրոյ 'ի ձեռն փոքրիկ տոմսեկիս : Նու քո այս եղբայրս յետնեալ , հարցանեմ զախրաղնէիդ իմոյ զորպիսութին : Եւ է զորպիսիս արդեօք ունիս զներկայութիւն 'ի յայսմ յոյժ յետնեալ և թշուառեալ ժամանակիս :

Նու հայցեմ 'ի բարերար և միշտ բարի եռանձնական տէրութէն . որ զեղբայրըդ իմ ցանկալի որ ես զարդ ոբ եկեղեցւոյ , առանց ամ վնասուց անփորձ և անսասան պահելով , անկարօտ պահեսցէ զժողովուրդ իւր 'ի քո քաղցր ձայնէդ

նէդ և բերկրալոյ բարբառոյդ։ Ամենա_
ւանդ ՚ի բաղձալի քոյին քաղաքավար հա_
մեստ և շահաւէտ խօսակցուէդ ամէն։
Նոյ թէ քոյին քաղցր և անոյշ և յոյժ
ազնիւ եղբայրութիդ հարցանէ զիմ
քո անարժան եղբօր զկեցութի, գո_
հութի և մեծ շնորհակալութի մատուցանե_
րեմ ոյ։ Որ մինչև ՚ի կէտ ծերեցման
գրոյս՝ պահեալ է զմեր անարժանութիս՝
իւր անհուն ողորմութբն և գթութբն։
Որ կեամբք ահա ողջ և առողջ անձամբ
՚ի մարմնի. կարօտ գոլով յոյժ քաղց_
րահայեաց և քաղցրատես քո պատկե_
րիդ տեսութե։ Նոյ յետ սիրոյ ող_
ջունիս և սրտատենչ կարօտոյս, ծա_
նիցէ քո գերազնիւ եղբայրութիդ ով
իմ ցանկալի լոյս աչացս, զի (այս ինչ
և այս ինչ։) Նոյ ողջ լեր իմ պատուա_
կան եղբայր յոյժ երկար և խաղաղ
կենօք և անդորր ամանակօք մինչև ՚ի
խոր ծերութիւն ամէն։

(Նուաստ ծառայ քո որդի մեսրոպ։)

## Աէծարան Աահարէոյ։

Ազնուատոհմ և մեծարգոյ. հոգե_
սէր և բարեպաշտօն։ Յոյժ պատ_
ւէ

ւելի և մեծարելի հեղահոգի մահտեսի աղայիս և սահապ պարոն՝ Գլխոյս Թագ և պսակ՝ ազգի պարծանք վելինամեթիս՝ շատ սիրով և կարօտիւ ծառայական ողջոյն ընծայեմ. և զանոյշ խադրիկդ հարցանելով հարցանեմ։ Թէ որպիսաբար կեաս արդեօք քոյին պատուէլութիւնդ ՚ի դառնացեալ ժամանակիս։ Ու խնդրեմ անարժան բերանովս յապենիյազ աղաչեմ. որ զքո գերամեծար անձնդ մին օրն հազար արասցէ։ Ու քո աղքատասէր չեն օձախին՝ առաւել առատութիւն բարեաց տացէ։ Ու գեղեցիկ զաւակն ծաղիկ չելեպիներացդ և քաղցրախօս տատրակ և ծիծեռնիկ թոռներացդ արևշատութիւն շնորհեսցէ ամէն։

Ու թէ զմեր անարժանութիւնս հարցանել կամիցի մեծ քո պատուէլութիւդ, գոհութիւն ամենամեծին այ։ Որ հրամանուցդ աղօթքովն պահերէ զմեզ մինչև ՚ի յայս կետս ողջ և առողջ անձամբ որ չեմք արժանի։ Ու աղօթող եմք հրամանոցդ արևշատութեան որ պիտանի ես բոլոր ազգիս. որ ձեռնտու ես տկարաց և օգնական անկելոց։ Ու



ես

եւ կերակրիչ և դարմանիչ ես որբոց և այրեաց իբր զգթած հայր և ողորմած մայր ։ Որև օգնականն ամենեցուն ած՝ օգնեսցէ քեզ յամ բարեգործութիս քո 'ի յելս և 'ի մուտս . և քո չէն օձախին զաւակ չորայ ամէն ։ Եւ յետ ծառայական սիրոյ ողջունիս յայտ լիցի քեզ են հրամանուցդ, զի (այս ինչ և այս ինչ ։) Եւ ողջ լեր իմ պարոն մհտսի ամիրայ հանդերձ քոյայնովքդ՝ երկար և խաղաղ ժամանակօք և ըստ հաճոյ փառուք ամէն ։

## Պատճէն Մեծատան ։

Բարեգործ և բարեպաշտ . բարեսէր և բարեբաստ . քաղցրաբարոյ և գթասիրտ ։ Ողջոյն լոյս իմ սահապ պարոն մահտեսի աղայիս՝ շատ սիրով և կարօտով զձեռքն կու համբուրեմ ։ Եւ զորպէսն կենաց հարցանելով 'ի կամս ըստ , խնդրեմ համապազ . զի արարիչն ած գթածն և ողորմածն , երկայն օրեր տացէ քո հրամանուցդ ։ Եւ նորատունկ նորաբողբոջ զուարթածաղիկ սիրելի սիրագուն օձախզադէ չելեպինէրացդ տացէ տր ած 'ի խոր ծերութին հասանիլ ։ Եւ յամ պատահարաց



պահ

պահպանեալ, որպէս զխուն հաստատուն և ծաղկեալ ծառ հաստատաբուն, բազում կենօք կեցուսցէ կազդուրեցուսցէ և հաստահիմն արասցէ զքեզ։ Եւ քո օրհնեալ օձախին զառատալիր բարութիւնն՝ որ դարմանիչ է օտարաց և մաւան աղքատաց որբոց և այրեաց, անհատ և աննուաղ արասցէ Տէր որպէս զառատութիւն բարեաց մեծի նահապետին աբրահամու հօրն հաւատոյ. և յոբայ երանելւոյն ըստ վերջին բարութեն։ Եւ քո հանգուցեալ բարեսէր և աստուածասէր ծնողացդ, և ծնողացն ծնողացդ, զհոգիսն լուսաւորեսցէ, և երկնից արքայութեն արժանացուսցէ ամէն։ Եւ թէ քոյին հրամանուցդ մեծապատուութիւնն՝ զիմ անարժանութիւ հարցանել կամիցի, գոհութիւն և փառք մեծին Այ. որ իւր անհուն ողորմութեն պահէ զմեզ ողջ և առողջ մինչև ցայսօր։ Եւ հրամանուցդ կենդանութե և առողջութե և տեւլեթին աղօթող եմք հանապազ. որպէս մեր սիրտ քո վկայէ։ Յիշելով միշտ և ոչ մոռանալով զքո հրամանուցդ յիմ վերայ եղեալ զերախտիքդ։ Որ զիս զքո անպիտան ծառայս, խնդրու-



թէ

Թէ 'ի հողոյն վրայէն յերկնից կամաւորն հանեցեր · որ տընօրդովք մեծով և փոքրով միշտ յարաժամ քո աղօթօղն եմք ։

(Նոյն զոր ինչ կամիս ասել ։)

## Առհաւէտ Բարեկամի ։

Գերապատուելի և գերամեծար · բարեհամբաւ և փառաշուք տանուտէր ։ Հոգւոյս հատոր աչացս լոյս մահտեսի եղբօրս՝ շատ սիրով և շատ կարօտով ողջոյն սիրոյ և ըղձանաց, և համբոյր պարանոցի գրկախառն ընծայի 'ի նուաստ եղբօրէս քումմէ և հարազատ սիրողէս ։ Հարցանեմ զքո հրամանուցդ քաղցրիկ խաղրիկն տոմսիւս այսու երկրորդիւ ։ Թէ ողջախաղաղ կեայ քոյին մեծապատուութիդ 'ի յայս դժվար ժամանակիս ։ Տէրն տերանց ա՟ծն ա՟մի՝ եղբօրդ իմոյ սիրելւոյ և ճշմարիտ բարեկամի՝ երկար ժամանակ պարգևեսցէ ։ Նու յամ վնասաբեր պատահմանց պահպանելով պահպանեսցէ · որ ընաւ քէտէր և վատ օրիկ չտեսնուս՝ բոլոր օձախոյդ հանդերձ ամէն ։

Նու Թէ զյետնեալ եղբօրս քոյ զորպխութիւն հարցանես, ամ բերանով

գոհութիւն և փառք այ՟ ։ Որ քո հրամա-
նուցդ բարի կամեցողին՝ պահեալ է ըզ-
մեզ ողորմութիւն այ՟ ողջ և առողջ մինչև
ցայսօր յոյժ առաւել քան զարժանն
մեր ։ Որ ընաւ չունիմք արժանաւորութիւն
նաև կենդանի մնալոյ · թող թէ պահպա-
նեալ լինելոյ ։ Եւ զկնի ողջունիս՝ գի-
տութիւն լցի քոյ հրամանուցդ · որ
սիրոյ գիրն քո եկն եհաս մեղաւորիս ·
և իսկոյն տրտմեցոյց և շուտով մի գձւ
բերկրեցոյց զկապեալս քո սիրովդ ։
Որ գրեալ էիր զիմ աչաց լոյս յակոբ չէ
լէպուն քո զհիւանդանալն, և տկլզա-
ւողջանալն ։ Որ թէպէտ ճրղմատեցաւ
քաղցրիկ սրտիկն քո, զոր ած ապաշ-
խարութիւն համարեսցէ ։ Բայց գոհութիւն
գթած մարդասիրին · որ գթացաւ դար-
ձեալ ըստ մեծի իւր գթութեան ։ Աչ-
քերնիդ ուրեմն լոյս լինի և այ՟ մարդա-
սիրին փառք ։ Այլ վաղ օրիկ չտես-
նէք · ողջ և առողջ մնայք երկար և
խաղաղ կենօք իբրու ծառ ծաղկա-
փըթթիթ և այգի վայելուչ 'ի շնորհս այ՟
ամէն ։

(Անարժան ծառայ մահտեսի անտօն ։)

## Գուրգէնայ Մեծատուն :

Աստուծով զօրացեալ և փառաւոր_ դեալ . բարեհամբաւեալ բարեհաշա_ կեալ : Որբոց և այրեաց խնամա_ ծու . և տնկարաց և անկելոց օգնական և ձեռնտու . և առատաձեռն 'ի չքաւորս : Ահայ պարօն իմ մահտեսի աղայիս զձեռքն կու համբուրեմ անարժան ծա_ ռայս բազում կարօտով և սիրով : Ես թէպէտ չեմ արժանի թէ հարցանել համարձակիմ զիմ աղայիս զանոյշ խաբ_ րիկն : Բայց գիտելով զխոնարհութիւն քո իմ ազնուականութ անձինդ , հարցանեմ ծառայս թէ որպէս կեայ իմ քաղցր աղայիս պատուելութին 'ի վշտաշատ ժա_ մանակիս : Զոր տր մծն տմք` քոյին հեզահոգի և գթասիրտ սիրելութեդ` և տէրամբ զօրացեալ աչացս լոյս բարե_ բոյս չէլէպինէրացդ արևշատութի տա_ լով : Բո աղքատագարման չէն օճախին զաւալ չըլլայ ամենևին . որ գթած հայր և ողորմած մայր ես տմ անկելոց : Որև յամ ձախորդութեց և ներհակ պա_ տահմանց , աղօթ պահեսցէ զքեզ տէր մծն տմի ամէն :

(Ես այլն զոր ինչ կամիս ասել :)

## Առ սիրելի բարեկամն և հեռաւոր գրոյ։

Բաղձալի ըղձալի եղբայր իմ ընտրեալ. 'ի ճշմարիտ սիրոյն սիրով սիրեցեալ։ Օ սիրոյն նըպատակն 'ի քեզ հանգուցեալ. և'ի սէրն նորին սիրով կապակցեալ։ 'Ի բարեսէր բանէն պատկեր նկարեալ. և իմաստից հոգւոյն խորան յօրինեալ։ 'Ի ներքուստ մաքրագործեալ. և արտաքուստ գեղափայլեալ։ Վարուք լուսափայլ և բարուք պայծառ։ Բազմաց տարփալի և իմ անձկալի. եղբայր անդրանիկ և անմիջոց սիրելի։ Պարծանք պանծալի և կարի' յոյժ ցանկալի և խնդութե ինձ տեղի՝ սիրելւոյդ իմ յոյժ սիրելւոյ ողջոյն սիրալիր՝ խանդակաթ տարփմամբ ընծայեմ՝ քո նուաստ և յետնեալ ծառայս։ և այլն։

## Խաւսեն գրեւ ընդ վաճառեւ։

Գովելի մարգարիտ իմ փայելչագեղ. և ակն լուսափայլ՝ գերազնիւ բիւրեղ։ Պարզ և յըստակ հայելի աննենգ 'ի սրտի։ Լուսաբողբոջ վարդ պայծառ բացեալ 'ի թփի. և դեռաբոյս մորճիկ 'ի մէջ պարտիզի։ Խնձոր նո-



րա

րախայծ , լուսին Թերաբաց ։ Բաժան բերկրաբեր , ժառանգ ծերութեանս ։ Ջահս ճրագ լուսալիր , որդեակս իմ որդի · աչացս լոյս ոսկեհատ Թոռնեակ սիրելի ։ Օ վարդագոյն տիպ քո համբուրեմ զեղուն կարօտիւ սրտակաթ ըղձիւ հոգւոյս իմ հոգի ։ (և այն զոր ինչ ունիցիս ասելի ։)

Եւ բաւ լիցի առ այժմ այսչափ ։

---

Ծանուցութիւն ինչ առ 'ի նիւթ ածօղ սիրելեաց զօրինակս բարևագրաց ։

Եւ աստ 'ի վերջում տետրակիս փոքու՝ ծանիր սիրելի ընթերցող ։ Զի որ եդաւ աստ այսքանիկ ինչ օրինակ բարևագրութեան , ոչ եթէ այն մտօքն եդեալ է՝ թէ միշտ այսպէս , և միայն այսչափով և ոչ աւելի կամ պակաս պարտիս գրել ։ Այլ այսոքիկ ոչ վարժիչ և գաղափար տուան քեզ փոքր ինչ ։ Որովք կարելի է քեզ կամ միայն զնոյն օրինակ գծագրել , կամ այլ աւելի ինչ երկարել · կամ թէ եւս կարճել , կամ յոյժ համառօտ գրել ։ Եւ կամ



քանի

քանի մի ինչ բառ և բան առնուլ 'ի միոյն և'ի միւսոյն կամ յայլ միւսոյն ։ Եւ կամ թէ առնուլ զոմանս յայսմ տետրակէ, և զոմանս յայլ տեղեաց, և կամ թէ արտահանել ինչ և 'ի քոյին մըտացդ ։ Միայն թէ ջանասցիս, որ կըրթելով զքեզ 'ի շարադրութն, կարողացիս ամ̃վ թարց օրինակի շարադրել ։ Եւ այս յայնժամ լինի, եթէ սէր ունիցիս քերականութն արհեստին ։ Որ թէ և ոչ կարիցես ուսանիլ զկատարեալն վն աշխարհիս զբաղմանց, գո՛նէ սակաւիկ ինչ ծանօթ գտեալ, մի՛ բնաւին անմասն մնասցես յայսպիսիս յոյժ պիտանի գիտութէս ։ Որ առանց սորա՝ թէ և զա̃ծաշունչ գիրս բոլոր 'ի բերան ունիցիս, կամ թէ և մեկնիցես, ո՛չ կոչիս գրոց աշակերտ ։ Իսկ թէ զհոլովմն գոնէ միայն անուան և բայի ասցես 'ի բերան, 'ի կարգի գրոց աշակերտացն համարիս ․ զի նոյն արհեստին արհեստաւոր եղեալ ես ։ Դարձեալ գիտելի է սիրելի իմ ․ զի որ ոք և իցէ որ կամիցի բարևագիր գրել միում ումեք, հարկաւոր է նմա ճանաչել զկացուի այնր անձին ․ և այնպէս գրել ըստ նմա վայելէ ։



Օր

Ո՛չ է եթէ այնպիսի բարձր գովութիւն
տացէ ումեք որ չիցէ վայելուչ նմա բը֊
նաւ , յոյժ անպատկան լինի գրեալն ։
Վասն այսորիկ պարտ է նկատել թէ որ֊
պիսի ոք է անձն այն , և այնպէս ըստ
պատշաճին գրել զբանն ։ Այսինքն՝ ե֊
թէ իմաստուն կարդացող է . եթէ ճո֊
ռոմ ատենաբան քարոզիչ է ։ Եթէ վա֊
նաչէն և մարդաշահ է . եթէ հեզաբա֊
րոյ և խոնարհ է ։ Եթէ պահեցող և
ճգնազգեաց է . եթէ աշխարհատեաց
անընչասէր ։ Եթէ համբաւունակ ար֊
հեստագործ է . եթէ համեղաձայն քաղ֊
ցըր երաժիշտ է ։ Եթէ մեծատուն և
ընչատէր է . եթէ ողորմած և հոգե֊
սէր է և առատաձեռն է 'ի յաղքատս ,
և այլ ինչ այսպիսի ։ Ո՛րս պարտ է
բարւոք նկատել և ըստ անձին տալ
զգովութիւն ։

Եւ երբ աստ եղեալ օրինակաց զմէկն
կամիցիս թէ գրես մէկի մի , և գտցի
'ի մէջն մէկ երկու բառ՝ որ չիցէ պատ֊
կան այն անձինն , պիտի որ չի գրես զայն ։
Ո՛չ է ոչ և կամիս՝ կարես հաւաքել և
յայլ օրինակացն կամ 'ի քո մտացդ ըղ֊
պատկանն այնր անձին որպէս ասացի ։



Եւ

Իսկ թէ կամիս յոյժ համառօտ գրել, կարես ասել. Պետրապատուելի երից երանեալ սրբազան հօրդ իմոյ մեծի զ̃ըբ ներբանսն համբուրեմ: Իսկ հարցանեմ զողջունս քոյին գերավսեմ սրբութեդ և այլն: Ի նուաստ և անարժան ծառայ ո̃յ. կամ ի նուաստ և անարժան՝ մեղաւոր և անպիտան ծառայ ո̃յ: Կամ յանարժան և անպիտան ի մեղաւոր մարկոսէս շատ բարև սիրելի եղբօրն իմոյ վարդերեսին: Կամ սիրելի աչացս լոյս աշխատաւոր հօրս և մօրս: Կամ աչացս լոյս սիրական որդւոյս մելքոնին:

Հարցանեմ զձեզ ի բարին և ի կամս ո̃յ· և այլն: Զի որ այնքանիկ ինչ երկար եղաւ յայսմ տետրակիս, ո̃չ սէրմայէ որվաւ քեզ այն: Որ զորքանն և կամիս, զայնքանն ածես ի գործ ո̃չ ի վերն ասացաւ: Իսկ թէ պատրիարգ է կոստանդնուպօլսոյ որում գրեսդ, պատկան է ասել: Նոր ոսկի բերան՝ երկրորդ ա̃ծաբան: Մեծի մարդաշատ գերահամբաւ արքայանիստ մայրաքաղաքիդ կոստանդնուպօլսոյ, երից երանեալ սրբազան արժանաւոր պատրիարգի և այլ: Իսկ թէ իցէ այլոց քաղաքաց առաջ-



նորդ,

նորդ , ասի ըստ պատշաճին ։ Մեծի Հռչակաւոր մայրաքաղաքիդ կամ ա̃ծա_պահ քաղաքիդ Թէոդուպօլսոյ · Եւդո_կիոյ · Գաղատիոյ · Զմիւռնոյ · և այլ ։ Սերագիտօղ · վերատեսուչ արք եպիս_կոպոսի · կամ արհի · և երջանիկ առաջնորդի և այլն ։ Իսկ թէ նուիրակ է ս̃բ էջմիածնի , ասի ։ Ով մօր մերոյ ս̃բոյ էջմիածնի գերապայծառ աթոռոյն և պարծանաց գահին հարազատ որդի և ծայրագոյն նուիրակ , երիցս երանեալ հօր իմոյ ա̃ծաբան վրդ̃պտի · և այլն ոչ պատկանին է ։ Եւ պատուելի մարդոյ զանունն ՝ ի մէջ գրին յիշել անպատկան է այլ միայն ՝ ի հասնին պարտ է գրել զայն պիսին որ պատիւ է նորա ։ Նաև ոչ զանուն իւր պարտ է յիշել գծագրօղն ՝ ի մէջ գրոյն · այլ ՝ ի ներքին կողմ̃ն գրին պարտ է յիշել զանուն իւր ։ Եւ պատուոյ անուանքն քանի մի տողով ՝ ի վեր պարտին գրիլ քան զբանն · պարապ մնա լով մէջն քանի մի տող ։

Իսկ թէ կթղկս է որում գրեսդ , կամ այլ աթոռոյ առաջնորդ , թէ ՝ ի հասա_նին ևս չի գրես զանունն , այլ բարւոք լինի · ոչ առանձին այլ ազգաց գիտունքն ։



Օր

Որ ի յանպիտեաց գիրն յայտնի է 'ի պատ
ւոյն առանց յիշման անուանն։ Որ գրի՛
Տասցէ գիրս ողորմութ͞բն ա͞յ 'ի ս͞բ էջ
միածին 'ի պայծառ գահն հայոց։
'Ի ձեռն նորին երից երանեալ եր_
ջանիկ հայրապետի տեառն"
սրբազան Կ͞թղկսի ա͞մ հայոց հօր մերոյ
ո͞րյ 'ի բարին ամէն։
Տասդէ գիրս ողորմութ͞բն ա͞յ 'ի սուրբ
Ե͞էմ 'ի ս͞բ գահն հայոց 'ի ս͞բն յակոբ
'Ի ձեռն նորին վեհազան Պատրիարգի
և արթուն այցելուի սուրբ տեղեացն՝
տեառն" Սրբազան և ա͞ծաբան
վրդ͞պի հօր իմոյ ո͞րյ 'ի բարին ամէն։
Տասցէ գիրս ողորմութեն ա͞յ՝ 'ի ս͞բ
վանքն մշու սուրբ Կարապետու։
'Ի ձեռն նորին արժանաւոր վերադի_
տողի սրբազան արք եպիսկոպոսի՝ տ͞ն"
ա͞ծաբան վարդապետի հօր
իմոյ սրբոյ 'ի բարին ամէն։
Տասցէ գիրս ողորմութեն ա͞յ 'ի մեծ
քաղաքն արքայանիստ կոստանդնու_
պօլիս։ 'Ի ձեռն նորին արժանաւոր
գերերջանիկ Պատրիարգի՝ տեառն"
սրբազան և ա͞ծաբան վարդապե
տի հօր իմոյ սրբոյ 'ի բարին ամէն։
Այսպէս և այլոցն ո͞չ և կամիս։

Ու մեկիմի տընէն որ գիր գրվի մե-
կիմի, կամ մեկը գրէ իր տանն ։ Որոց բերնէն որ բարև կայ, կամ որոց բարև կընէ. այնքն յետ կատարման խօսիցն պատկանին դնիլ ։ Թէ՝ մեր էնիշտէ պօղոսն. քեռի սարգիսն. և դըրացներըն քեզ շատ բարև կանեն ։ Նոյնպէս և միւսն թէ, ֆալանին ֆիլանին շատ բարև կանեմ ։ և այլ ասելի խօսք որ լինին ՚ի նոցին բերնէն՝ ՚ի վերջն դրիլ ։

Բայց զայս գիտասջիր սիրելի ընթերցօղ. զի ոչ ինչ է պիտոյ ցուպ ՚ի ձեռն կարողաց առ՚ի քայլել, այլ միայն տկարաց. և ոչ հաց և հանդերձ՝ ունողացն է պիտանի, այլ չունողացն ։ Նոյնպէս և ոչ ուսուցմն ինչ է հարկաւոր ումեք գիտողի զնոյնն, այլ տակաւին ոչ գիտողացն ։ Նաև այս հայելով և մերս նուաստուի, մանաւանդ յումանց եղբարց սիրահարկեալ, կամեցայք տետրակ մի շարադրել բարևագրութե ։ Իբրու ձեռընտու այնոցիկ, որք չգիտեն բաւական շարադրել ինչ ըստ արհեստին. անհմուտ գոլով քերթողութե. սակայն որոյ ոչ ոք կարէ շարադրել ինն ինչ ուղղապէս միշտ ։ Նասցի զմիշտն. զի

դրոտանին ընթերցասէրք ոմանք, որք յա-
ճախ ընթերցմամբ գրոց, վարժեալ են
ունել շարադրութիւն ուղիղ։ Բայց ո՛չ
ոչ գիտելոյ զարհեստն քերթողութեան,
կարեն սխալիլ ուր ուրեք. կամ 'ի հո-
լովսն անուանն և բայի, կամ թէ 'ի խըն-
դիրսն և յայլսն։ Իսկ այս տետրակ ոչ
և այնպիսեացն է պիտոյ. զի կարեն նո-
քա զմորթն հանել 'ի ջրէն ըստ ասիցն.
դեր քան զայս շարադրելով գեղեցիկ
և նուրբ։ Մժլ այնպիսեացն տրվաւ-
այս քիչ մի ձեռնուտ, որք չեն վար-
ժեալ այնքան 'ի շարադրութեան։ Եւ մերս
իսկ տկար ուժն՝ անձախ թէ այնպի-
սեացն կարելով սակաւ ինչ օգնել՝ որք
քան զմեզ իցեն տկարք, յարմարեցաք
զայսքանիկս։ Մնեալ զոմանս 'ի նախ-
նեացն շարադրութեանց, և զոմանս որքան
երբեր կարըն ամենակար՝ 'ի կարն մեր
տկար։ Ընկալարուք ուրեմն սիրով՝ ձե-
րովդ խոնարհութ. ով եղբարք իմ հայա-
զունք և սիրազունք՝ և հայաստան եկե-
ղեցւոյ ընթերցասէր սիրամանկունք։
Օ՛ փոքրիկս զայս տետրակ՝ իբրու խա-
ծած խնծորակ մի 'ի չքոտ մանկաղէ իմս
աղքատութեան և ողջ լերուք ամէն։



Զը

## Զրուցին պաշտպանը՝ տրվէր Գրիգորեան. Աստուածընծայեցի Հեւարեան։

Գրեցուած թաղէն և օրինակը ձեռնագիր թողում վրան նրա ինչ։

Պատճառ գրոյս այս է։ Որ ես մար-
տիրոսի որդի ոսկերիչ մահտեսի յու-
նանս, ՚ի թվին հայոց ռ̄ճ̄զ̄ծ̄. ապրիլի ի՝
առի ոսկերիչ մահտեսի պետրոսէն հինգ
հարիւր ղուշ փող։ Որոյ կեան կանէ
ճ̄զ̄ծ̄ ղուշ։ Եւ առի զայս ըստակս ճ̄զ̄ծ̄
օր վատէով. որ իմ վերայ հարկաւոր
պարտք է վճարման։ Նորդ յորժամ լրա-
նայ օրն վատէին մերոյ, տամ և վճա-
րեմ ՚ի վ զիմ այս պարտքս. և առնում
զիմ զայս ձեռագիրս զոր տվլի այժմ
՚ի ձեռս նր։ Որ ՚ի պատեհ ժամու վը
կայեցաք տեսողացն և բաւ է։

Վկայ բանիս՝ այս անուն և այս անուն
և այս անուն։ Ես մարտիրոսի որդի
մահտեսի յունանս կնքեցի զայս իմ ձե-
ռագիրս որ ինձ հաճոյ է։



Պատ

Պատճառ ձեռագրոյս այս է ։ Որ ես
սիմաւոնի որդի զաքէզ Թէլիտոնս ,
հետ տէրացու աբրահամին օրթաւխ է_
զայ ։ Եւ զուշ ես դրի սէրմայէ , Ըդճ
զուշ տէրացու աբրահամին ․ որ խանու_
թիս կէտիկն այլ իմ է ։ Այս զավլոնս ,
որ երբ հանիմք եւ 'ի տարեգլուխն
և հիսապ լինենք ․ ինչ ինչ շահ տված
որ լինի , կէսն իմ լինի՝ կէսն նորա ։
Ու թէ ինչ չլինէ՝ զսրար ալ ընեք նէ ,
նոյնպէս կէսն ես քաշեմ՝ կէսն նա ։
Ու թէ ով գիտէ զատվելու թէ լի_
նինք , թէ ըուզակ թէ լստակ , թէ
պարտք թէ վէրէսիյէ , երկուքիս հա_
ւասար լինի ։ Եւ այս պայմանիս վե_
րայ՝ տըվի զայս իմ ձեռագիրս 'ի ձեռս
նորա ․ որ 'ի դիպօղ ժամու հաստատեսցէ
զպայմանս և բաւ է ։
Գրեցաւ օրթաւխութեան թէմէսիւկս՝
'ի թվին հայոց 1201 ։ մայիսի տասն ։

(Եւ այլն որ պէտն ։)

Պատճառ ձեռագրութեանս այս է ։ Որ ես
գրիգորի որդի ոսկերիչ մահտեսի
պետրոսըս , որ տվերեի ոսկերիչ մահ_
տեսի յունանին 500 զուշ փոխ , 201 օր



վա

փառօք ։ Նոր 'ի նմանէ զիմ ըստակս պէղուսուր և վճարվեցայ և զիմ մէկէթս իպրա ըրի ։ Որ այլ մէկ ըստակ մէկ փող առնելիք չունիմ 'ի նմա ։ Այս եւս զայս իմ ձեռագիրս նմա 'ի թվին 1202 ։ Նայեմ բերի ուլթն ։ որ 'ի պիտոյ ժամանակի վր կայեսցէ ասացելոյս և բաւէ ։

Աւելեա ոչ էր հարկաւոր դնել օրինակ ձեռագրուն ասա ։ զի այժմու ժամանակի առ և տըր մէջ եղողքն՝ լաւագէս գիտեն զայս քան զմեզ ։ Բայց օնտան տա պոլուլնսուն զարարը եօղա ։ պէյքի պազըրինա լազըմ օլուր ։

Ունիմք եւս տվ 'ի մոր թէ մնացեմք ։ չինել 'ի դիպօղ ժամու տեսակ մի եւ փոքրիկ այսպիսի ։ և հաւաքել 'ի նմա մասունս ոմանս քանից՝ պատկանաւորս բարեւագրուն ։ Որպ փայտս ինչ քերեալ տաշեալ պատրաստեալ առ 'ի նիւթ շինուածոյ ։ Նաև վն դիւրելոյ փոքր ինչ զաշխատանս բարեւագիր շարադրողաց և համբակ զինքենս համարողաց ։ Այս եկդ առ 'ի կրթել թերեւս նորօք սակաւ ինչ 'ի շարադրութիւն և յիշել զմեզ յաղօթս ։



Այս

Եւ իբրու համառօտս իմն այնց արարելա_
ցաց, եղաք սաստ սակաւ ինչ այսպիսիս
ըստ այբուբենից կարգի։ Որ պէտքի
հաճոյ լիցի ումեք շարադրասիրի։
Ազգիս հայկազնոյ՝ տոհմիս արամեան դի_
տապետ պատուէլ։ Ազնուաբարոյ,
համեստակենցաղ և խոհեմազարդ։
Ահաւասիկ եկն եհաս առ իս գիր քո
պատուականդ՝ շնորհալի մատանցդ։ Բա_
նիւ գերազանց, արդեամբ անբաղդատ
հայր իմ պատուէլի։ Բարձրելոյն փառաց
ջատագով, և ծայրին տառիցն քննաւէր։
Բարեպաշտօն ազնուական, և հրաշակա_
փառ տանուտէր. ՚ի բարեսէր ծնողէ բա_
րեմոյն որդի։ Գերազանց առաքինութե_
բարեշքեղեալ։ Գիտնականին և գործ_
նականին հանդիպեալ եօթնալեր շնոր_
հօք։ Գրկախառն փարմամբ և ըղձալեր
համբուրիւ։ Դայեակ և դաստիարակ
նորածնել մանկանց եկեղեցւոյ։ Դրախտ
ծառատունկ. բարեխիտ տընկովք ու_
ռճացեալ։ Դրուատեալ ՚ի բազմաց և յաղ_
դեալ ՚ի յոլովից։ Եռալուսեան միութեն
կամակատար պաշտօնեայ։ Եռաբորբոք
սիրով և սրտառեռն կարօտիւ։ Եսցէ և
մնասցէ մեր հայրութիդ երկարօրեայ ժա_



մա

մանկաւ։ Ո՜ ու՜րթատեսակ սաղարթիւք
և քաղցրահամ պըտղօք լըցեալ ծառ կեն֊
դանարմատ։ Ո՜ օրացեալ զօրութբ ա֊
նեղին աջոյ. և լցեալ իմաստիւք ՚ի հոգ֊
ւոյն շնորհաց։ Ո՜ որ պահեսցէ տր ան֊
սասան այժմ և յապագայն ժամանակաց։
Իախոհ իմաստութն, անքինի իմաստասէր։
Իական բանին ողջ՝ սպասաւոր աւետա֊
րանին։ Իլէգտորիոն հոգևոր, ոսկեճա֊
ճանչ բազմագունեան, Ընթերցասէր տի֊
րացու, իմաստասէր և հոգեսէր. որ ընտ֊
րեալ ես և պարզեալ եղբայր իմ ազնիւ՝
եօթնպատիկ ՚ի հոգւոյ։ Ընկալ սէր իմ
ծրիկ ինչ. ՚ի ծիւրամիտ ծրածրակէս։
Ընդ վզով քո անկեալ որդեակ իմ սիրուն,
զքաղցր տիպ քո համբուրեմ կարօտով
զեղուն։ Թանգարական ակն լուսազեղ
եղբայր իմ անգին մարգարիտ։ Թաւա֊
խիտ և պտղաւէտ անդաստան բարեմոյն
և բերրահող։ Թափուրս ՚ի բարեաց՝ ծա֊
ռայս անպիտան։ Ժառանգ արժանա֊
ւոր՝ հայրապետական բարձր աթոռոյ
սրբոյն գրիգորի։ Ժառանգ սրբութե և
շառաւիղ օրհնութե։ Ժառանգ հայրենա֊
կան բարետոհմութե և բարեգործութե։
՚Ի բարեպաշտ և պարկեշտակրօն ծնողաց



դաս

դաստիարակեալ: Իբրև զգիր յորձանի՝
անջնջելի կայ տպագրեալ սէր քո՛ի սրտիս:
՚Ի դառնադառն վիժանաց ժանտա_
ժուտ ուղղեալ ծփմանցն բերմանց:
Լերդատաչոր կարօտիւ իբր եղջերու ՚ի
յաղբերս ջուրց: Լուսալիր սիրտ քո վը
կայէ ով իմ աչացս նշոյլ: Լցեալ գերա_
ռատ պարգևօք հայրածագ անըստուեր
լուսոյն: Սաղից և բենկորձից հմտագոյն
ոլորակօղ: Սանդակաթ կարօտիւ և կա_
րի յոյժ բաղձանօք: Սաչաբարձ խաչա_
կիր միանձանցդ բազմութե՝ արի առաջ
նորդ: Օպադումն արփիափայլ, և ճա_
ռագայթ գերանշոյլ: Օղկեալ հոգե_
կան և մարմնական բարեբոյս շառաւիղօք:
Օայրաճաճանչ լուսով լրուե՝ հերքին
բնաւին մըթութեց: Կաթոգին եռափա_
փագ կարօտանօք: Կարօտով քո խարշա_
տիմ և սիրով քո տոչորիմ: Կորովիմաստ
և բարեբաստ մեծ եղբայր իմ սիրազուն:
Հայրական քո գթութեանդ և երախ_
տեացդ պարտական որդիս և ծառայս:
Հաստատ յառաքինութե իբրու արձան
կարծրակառոյց: Հարցաբանեմ զամ զոր
պիտութիս քո: Ջակորձից և հուհայից
հրմտաձայն երաժշտող: Ջայնաւոր եր_

գոց երաժիշտ հմտագունեղ ։ Ձայնեղ
տիրացու՝ համեղ երգաբան եղբայր
պատուական ։ Ղամպար լուսալիր՝ գե_
րապայծառ նշողիւք ։ Ղեկավար իմաս_
տուն՝ հոգևոր հմտութբ ։ Ղենջակա_
սփած խոնարհին՝ խոնարհ աշակերտ ։
Ճշմարիտ քահանայ ըստ կարգին մել_
քիսեդեկի ։ Ճոխացեալ գիտութբ հո_
գևոր իմաստութե ։ Ճրագ լուսատու_
տանս հայաստանեայց՝ Մատակարար ճըշ
մարիտ՝ կարգաց եկեղեցւոյ ։ Մատու_
ցող բուրվառաւ անձին՝ զխնկերս մտա̀ց
տն̃ 'ի հոտ անուշից ։ Մարգարիտ պայ_
ծառ, ակն արփիափայլ հայր իմ պատ_
ուական ։ Յարապօարձ արմաւենի 'ի
տանն այ̃ անկեալ 'ի գնացս հոգւոյն վը
տակաց ։ Յետ որոյ յուշ լիցի վսեմափառ
քո անձինդ ։ Յուշ լիցի յետ որոյ քոյին
սրբութեդ ։ Ներ մրրկամբոխս ներկայիս
և շատավլէշտ կենցաղոյս ։ Նուաստա_
գոյն և յետնագոյն քո ծառայս ։
Ներքինս սենեակ լի է սիրովդ քո սէր իմ ։
Շաւաւիղ երջանիկ երջանկապարգևեան ։
Շիջեցափառ նուաստ անպիտան ծա_
ռայս ։ Շնորհաշուք շողիւք շքեղեալ
անձինդ ։ Ողջագուրեմ զանխլ քոցանկալի

ո՛վ իմ աչացս լոյս ։ Աշխարհ տառապեալ զարդ անապատի հայր իմ պատուական ։ Աղօթնեմ զքաղցր սիրելիդ իմ սիրահարս քո գերիս ։ Պահեսցէ տ̄ր զսիրելիդ իմ միշտ բերկիր և զուարճ հոգւով ։ Պանծալի զարդ անապատի ծաղկեալ ծերունւոյդ ։ Պատճառ գոյութեւս յետ այ՝ հօրդ իմոյ ծերունւոյ ։ Ջերմաջերմ ըղձիւ հարցանեմ զողջախութի՛ քո ։ Ջուր մանրածաւալ սրտիս պաքելոյ ։ Ջրարբի անդաստան արդիւնոր հոգւոյն իմաստից ։ Աւակայ և անիմաստ քո յետին ծառայս ։ Աւահաւոր ուղևոր երկնաւոր ուղւոյն ։ Աւետին քաղցրաւէնեաց · դեղթափ օշարակ ։ Սիրելի անձկալի, սրտիս բաղձալի ։ Սիրով քո խարուկեալ՝ յաւէտ տոչորիմ ։ Սրբել՝ ի մարմնի, զըսպել՝ ի հոգի յարակ մաքրութե̄ ։ Վաղեմնական սիրելւոյդ՝ փաղեմնատենչ կարօտի՛ ։ Վանական հըսկող · անմարմնոցն համախօսակից ։ Վարդ անուշահոտ ՚ի բուրաստանս եկեղեցւոյ ։ Տառապակ առաւօտեան · զարթուցիչ ոգւոց թմբրելոց համեղ քո ձայնիւդ ։ Տարատողիւ տեղեաւ տառապակաց տրուպս ։ Տիպ քո տիրական պատկերիդ սեւեռեալ կայ յար ՚ի սրտիս ։ Բաբուն իմաստուն ·



վար

վարդապետ ոգեշահ ։ Բայց մի 'ի մտացս
գրեթէ ոչ հեռանաս ով իմ աչաց լոյս ։
Բայց ինչ թէ մոռանամ զքեզ ով եղ_
բայր իմ հոգեկից , դառնամ հառաչեմ .
որ ծուխ իմ կապուտակ առնէ զերեսս
եթերին ։ Յանկ ամրափակօղ սրբազան
հոգևոր տր̃՝ այգւոյս մերոյ հայկազնոյ ։
Ցնծութի̃ և բերկրութի̃ զքեզ սիրողաց ։
Յօղ առաւօտեան իջեալ 'ի պարզոյ ·
ծաղկանց և բուսոց թարմաբերութի ։
Փաղփինափայլ՝ փունջ ծաղկանց հա_
ւաքման ։ Փայլեալ գերերևակ տեսուէ̃
'ի գմբեթայարկ խորանս եկեղեցւոյ ·
Փոքր տոմսիւ̂ փոքուս , զմեծիդ հար_
ցանեմ զորպիսութի̃ ։ Քաջ հռետոր և
հոգելից իմաստասէր ։ Քեզ ամենայար
գելի անձինդ ազնուիդ՝ ո՞ր զով պատկան
բաւեսցի ։ Քո ազնիւ պատուականն տես_
սոյդ , և քաղցր և համեղ խօսոյդ՝ կարի՛
յոյժ կարօտ մնացի ։ Օծեալ աչքոյդ
քումսրբոյ , և ներբանց և գարշապա_
րաց՝ համբոյր բաղձանաց ընծայեմ տր̃
իմ և հայր հոգևոր ։ Օրինակ բարեաց
բարոյից և նպատակ առաքինութ̃ց հայր
իմ երջանիկ ։ Օրհ̃նեալ սէր քո բնական
և բարոյական , միշտ պարտաւոր պահէ



զիս

զիս զքո անարժան անպիտան որդիս ։
Ողջ լեր ուրեմն երկար ժամանակօք և
անսասան կենօք ամէն ։

Արդ այսքանս բաւ լիցի այժմ. և
ծանիր սիրելի իմ ։ Զի ոչ թէ_
պէտ տաշեալ յղկեալ իցեն փայտքն շին_
ուածոյ, բայց թէ փցուն իցէ շինօղն,
ոչ կարելով ըստ տեղւոյն 'ի գործ ածել
զնա, փցուն և շինուածն լինի ։ Այս_
պէս և աստ պարտ է գիտել զսոսա, թէ
որն յոր տեղ պատկանի դնել կամ որ ան_
ձին. և այնպէս ածել 'ի գործ ։ Զի մի՝
յղկեալն բարուոք, լիցի անբարուոք.

Խրատաբանութիւնք սմանք ըստ ճարտարութեան.
և ինչպէս բարոյախօսք՝ վասն եղծանելոյ սմանց
ճարտարասանաց ։

I Որք ընդ զօրեղ կայսրն չծանեան ընդ
ճաշուամն, են լծէպտ և ասին 'ի բա_
եանցն հաշվի, ոչ արտելեալ սակայն այլ
իմնին 'ի կուվաքուն տեսակէ կենդանա_
կանն սեռի, որոց՝ փողոցքն են կացանք ։
Որք ընտրեին գոլով անհուպ վեր սաելոյս
առ իւրեանցսն, զեկն օտար նոյնն տեսա_
կի, անգուլժ հաջոտեալ արտասահմանեն ։



Եւ

Նու նոյնք միափողոցք՝ Թուրին Թեպէտ
համակամ՝ յարտաքարբէն զայլուստն ,
բայց այն ոչ նշան այսր կարգի , այլ ներ-
հակին երկու սաստկութե․ զոր սակս օտար
եկեղյն արտաշնչատեն ։ Որք մինչ անդ ոչ է
վն որոյն , իբրու խաղաղք և հաշտք քնա-
փեն անձիկ ։ Իսկ յերկերն առաջի բեկոր
մի կերլէ , աղմուկ խածատման իբրու ան-
հաշտ վըրդովմանց՝ 'ի նոյնում իսկ վայր-
կեան յերկս առ բերեն ։

2 Այն զօրագոյնն կողման՝ այլազան հասա-
կաւ միակամ ժիր և արագ մշակքն
ձագերին՝ յաւէտ գան 'ի գործ՝ քան Թէ
կողմանն առընչակցին՝ զնոյնն ունօղք ըղ-
կոչումն և զհասակ ։ Ի․ յսկզբ՝ հասեալքն
'ի լաւ անդր ներտըպալի անախպ տըպաղին ,
այլք քան զայլսն ելով 'ի նոյնում տըպի ,
գործունեայք աշխ և յօրդոյք ըստ ո-
րում և իցէ մասին ․ շարժողին կամ շար-
ժելոյն ․ որ որով կայ 'ի վաստակ ։

3 Որպէս համանուն յարգելին ձագիցն
վերնոյն , զվխմանցն մանուանց ունօղ
զկոչումն ։ Ոչ ըստ դըրոյն , եԹէ ոչ ըղ-
գունեանն ունիցի զօրակ՝ յարգելի ։ Այն
և են ներձնշմանն ըղձի , ոչ ըստ ձգմանն


յեր

յերկար , թէ ոչ ըստ բոցոյն սաստկու_
թե̃ ընկալնանի ։

4 Ո՛չ զպայլոյն այլ՝ անհաղորդ նմին՝ կրէ
զհետեւումն կամ փայելէ ։ Նմւոր
ինչ արտընծիւղինն , գիտէ զիւր յորմէն
կազմիլ նմա 'ի հաճ կամ արհաճ ։ Նուակ
ոմ ասացեալ · զեւրանէ կորզանելին կա_
խիլ սրընկէ ։

5 Վերնագոյնն եռամասն շարժողին՝
եթէ զարտուղին առցէ ընթացս
ըստ յիննեակէն ելելոյ , անիշխ և երկուքն
յիւրեանցսն դիմեն գնացս իբրու ան_
սանձ երիվարս ։ Յորոց որ հաջէնն ,
թողու զընդդէմն օտարին , և որ ցան_
կայն՝ զցանկալին ։ Ի ներհակն հակա_
